

զան կը նշանակէ. Խաղերն ի հարկէ ունեցել են տաճար այդ տեղ. կղզին միաժամանակ լաւ ամուրթիւն էր նրանց համար: Հեթանոս հայերն հոս ունեցել են տաճար, ինչպէս յայտնի է ըստ աւանդութեան Լուսաւորիչը հին կոտառունը քանդել է տւել եւ նոր քրիստոնէական տաճար շինել: Այսպիսով պատմական իրողութիւն է որ Սեւանում հեթանոսական տաճար է եղել. որ այդ տաճարի փլատակներն այժմս էլ կան, հաւանօրէն Սեւանի գագաթն է այդ:

Ճերմակաւորը ելնում է այդ փլատակների միջից. իսկ վանահայրը պէտք է նստած լինի այդ փլատակների եւ Առաքելոց վանքի միջեւ գտնուած ժայռերի, խաչքարերի մօտ. որով վանահայր առաջը կը լինի նոր շինուող տաճարը, իսկ ետեւը՝ հին փլատակ տաճարը. ծովն էլ առաջը. ինչպէս ճերմակաւորը իր Խօսքի մէջ յիշելով ցոյց է տալիս այդ:

3. Ճերմակաւորն ասում է: — «Տես այդ երկու երեք խարխուղ խցիկները...» (էջ 7): — Յիրաւի այժմ էլ կան խցիկներ. խարխուղ եւ մեծ մասամբ քանդուած վերոյիշեալ տեսարանի մէջ երեւցող. Առաքելոց տաճարի կողքին եւ առաջը — «Հին Աստուածները», ներկայացնելիս պէտք է ներկայացման ղեկավարը այցելէ Սեւանի կղզին, դիրքը լաւ գիտէ եւ մտաւու լինի, որով սպաւորութեանը ուժեղ կը լինի եւ պատկերը հարազատ:

4. Բ. տեսարան: Գրամայում ասուած է Ամբողջ տեսարանի միջոցին քամի է, երբեմն խիստ բուռն թափով » (էջ 11) — Սեւանի այժմեան նաւավարներն էլ մանրամասն գիտեն ծովակի վրայ փչող քամիների ինչ լինելը: Քամիներ յաճախ են փչում. որոնցից ամենից վտանգաւորը այսպէս կոչուած «Սոթի» քամին է. Այդ քամին փչում է հին Սոթք գաւառից, կղզու հարաւային կողմ եւ ամենից վտանգաւոր քամին է. ալիքները շատ մեծ են, թափով. այնպէս որ ինչպէս նաւավարներն էլ միշտ ասում են, երբ «Սոթ է կանգնում», դուրս գալ կղզուց կամ կղզի մտնել դժուար է, նաւը սովորաբար չի գործում քանի որ փոքր նաւակ է. 4—5 նաւաստիներ են ղեկավարում. կղզու ափերը ժայռոտ են, նաւը ափին մտնելով չի կարողանում: Յայտնի է, որ 70 ական թուերին ժ.թ. րդ դարու նոր Բայազետի կողմից եկող մի նաւ Սոթի քամուն ենթարկուելով խորտակւել է եւ շատերը խեղդուել են (տես Սարգիս Փիլոյեանի — յետոյ Սեւանի վանահայր Սարգիս եպ. — «կորած Մարգարիտ» վէպիկը):

5. Գրամայում յիշուում է, որ վանքում գործադրուում էր լաստ, որը համապատասխանում է իրողութեան: Մինչեւ ժ.թ. րդ դարու երրորդ քառորդը գործադրուել է լաստը, որը բաղկացած է եղել 7 հաստ գերաններից. վերջին լաստի գերանները ցայսօր կան: Առաքելոցի գաւթի սիւններն են: Լաստն էլ վարում էին միաբանները, ինչպէս վկայում է ականատես Մ. Ա. Կիւմրի-շխանցին իր Սեւանայ պատմութեան մէջ:

Եջմիածին:

Pessimist.

(Շարունակելի):



### Ս Ա Ց Ե Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

ՀԱՄԱՍՏԵՂ «Գիւղը», Պոսթըն, 1924, էջ 155, գիւն 1 տողար:

Այս հեղինակը եւ նրա գիրքը մի միսթարական գիւտ է մեր գեղարուեստական գրականութեան համար: Այսպէս ենք ասում ոչ միայն հեղինակի ձիրքը եւ նրա պատկերացման նիւթը նկատի առնելով, այսպէս ենք ասում վերոյիշելով եւ այն, որ մեր քաղաքական ճակատագիրը առանձնայատուկ հոգեր բարդելով հայ գրողների աւագ սերունդի առաջ՝ նրանց զրկեց գեղարուեստական զգացումի, ապրումի եւ վերարտադրումի անխառն ստեղծագործութիւնից: Մանչեցաւ մեր հասարակական կեանքի կարեւորագոյն փուլը, երբ մենք նահապետականութիւնից ու ասիականութիւնից թեւակոխեցինք արդի եւրոպական քաղաքակրթութեան ուղին, եւ այդ փոխանցման շրջանը իր բոլոր տուայտանքներով իր նոր հոգսերով եւ նոր ձգտումներով չպատկերացրուեց մեր գեղարուեստական գրականութեան մէջ: Ի՞նչ ենք հասկանում նահապետականութիւն եւ ասիականութիւն բառերի տակ եւ ի՞նչ եւրոպական քաղաքակրթութիւն յորջորջումով: Այն, որ մեր ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը ապրում էր կառչած հողին ու ջրին, ինքնամիտի տնտեսութեան պայմաններում, երբ նրա գերագոյն իշխանութիւնը բնութիւնն էր հանդիսանում իր անողոր օրէնքներով: Այն, որ մեր հայրենիքը ժ.թ. դարի երկրորդ կեսից սկսած դառնում է մի վայր, ուր սկսում է իր

շահատակութիւնները նախ առեւտրա-փոխատու  
 դրամագրուելը, ապա արգիւնաբերականը, որը  
 փլում է հին կենցաղն ու սովորութիւնները,  
 անապահոյութեան զգացում ներարկում բոլորին  
 եւ շուար վիճակ ստեղծում երեկուայ շէն ու  
 առատ գիւղերի համար: Չի կարելի ասել, թէ  
 այս երեւոյթները անկատելի են մնացել մեր  
 գրականութեան մէջ, որ մեր գրողները աչք են  
 գոցել նրանց հանդէպ: Այլ, այդպէս չէ: Միայն  
 ըստ մեծի մասին ազգագրութիւնը սպաննել է  
 արուեստը (Պ. Պոօլեանց, Ա. Արարատեան,  
 Գար. եպ. Սրուանձտեան եւ այլն) կամ թէ գա-  
 ղափարական անկարգութիւնը չի կարողացել  
 տարբերել կարեւորը անկարեւորից եւ իր համար  
 ստեղծել վճիտ հասկացողութիւն, թէ ի՞նչ է  
 ծառայում ինքը եւ ի՞նչ հետապնդում (Քա-  
 ռութիւն քաչ. Ճուղուբեան, Ստ. Տէր-Աւետի-  
 քեան եւ այլն): Միայն վերջին տասնամեակում է,  
 որ մեր հողի վրայ կեանք է առել ու փթթել  
 մի համակրելի տաղանգ, Ստ. Զօրեանը, որը  
 արուեստագէտի նուրբ զգացումով եւ խորատես  
 աչքով դիտում է մեր ժողովրդի կեանքը, նրա  
 ծոցում կատարուող փոփոխութիւնները եւ առանց  
 ձեռքի կամ հրապարակախօսութեան պատ-  
 կերացնում այդ կեանքը իւր յաջող կերտուած  
 պատմութիւններում. տեսէք, ասում է նա իր  
 գործերով, ես չեմ մեկնաբանում, այլ պատ-  
 կերում եմ, ազգում է այն ձեր սրտին ու մտքին,  
 յուշեր է վարթեցնում, ափսոսանք, գուցէ կիւք,  
 վերոյվճանք, խղճահարութիւն, — եթէ այժմ,  
 ուրիշն ես սպասւորում եմ արուեստին, աւելին  
 էլ չեմ ցանկանում: Այսպէս է Ստ. Զօրեանը:  
 Այսօր նրա կողքին իր ողջ հասակով ծառայում, որ  
 է Համաստեղը, ծառայում եւ հոչակում, որ  
 մաշել է, չբացել անկարգութիւնը, անկատու-  
 ութիւնը հայ պատկերաւոր արձակի մէջ, որ  
 գեղարուեստական համաչափութեանը կցոր-  
 դում է իրականի խոր ճանաչումը եւ թափփծ  
 ու վիշտ, որ այդ իրականը բնականոն զարգա-  
 ցումով չէ որ ինքը իրան մաշեց, այլ մեր ճակա-  
 տագրից անբաժան մղձաւանջով:

Իր այս հատորի մէջ Համաստեղը գիւղա-  
 գիր է գերազանցապէս: Նա իրապաշտ գրող է,  
 որ ճանաչում է գիւղի գոյութեան կուռի, աշխա-  
 տանքի ու կենցաղի անողոք օրէկները: Բիրտ են  
 այդտեղ մարդիկ, երբ այնպէս են դասուորում  
 պայմանները, որ երկու Ֆիդէլքական մարմիններ  
 անկարող են լինում տեղաւորել մի եւ նոյն  
 կէտի վրայ: Զգայուն ու վշտակցող են նրանք,  
 երբ խախտում է աւանդականութիւնը, կոր-

ծանում համայնքի կարգը եւ համայնակցին  
 տառապակրութեան մատնում: Գիւղի զգացողա-  
 կան աշխարհն է պատկերել Համաստեղը, մի  
 աշխարհ, որ խարսխած է բուսական գոյութեան  
 պատուանդանի վրայ եւ այս պատճառով մնայլ  
 ու անհամբոյր է, հակառակ նրան, որ հեղինակը  
 սիրում է իր հերոսներին եւ նրանց բերանում  
 պայքարի, բողոքի լեզու չի դնում, այլ չմեղան-  
 չելով ճշմարտութեան դէմ՝ ցոյց է տալիս, թէ  
 ինչպէս այդ գիւղացիները խոնարհ իրանց ճա-  
 կատագրին՝ գոհ այն չարքաշ աշխատանքից, որ  
 իմաստ ու սնունդ է պարգեւում նրանց գոյու-  
 թեան: Համաստեղի դիտողականութիւնը յատ-  
 կապէս փայլում է այս վերջին կէտում. ապրում  
 եւ յարատեւում է նա, ով սիրով է ընդունում  
 աշխատանքի բեռը. խոտորոջ դատապարտում  
 մուստի հերոսը, գիւղի զուակ, որ խոտորում  
 է հողի իշխանութիւնից, իր զգացողական աշ-  
 խարհը գեղեցիկների մատնում, պարզ հովիտի  
 դառնում գիւղական փեթակում եւ փեթակից  
 իր դուրս շարտում: Ահա խաչիկը («Աղաւնի-  
 էլ դուրս շարտում», ունեւոր, հաստատ օջաղի  
 ներք») պատմութիւններից, որ խոտորում է հողի իշ-  
 ղաւակ, բայց նա նոյնպէս խոտորում է հողի իշ-  
 խանութիւնից, վար ու ցանքի փոխարէն ընտ-  
 լում է «աղուընիկ խաղնողի» պարապմունք:  
 Իսկ արդիւնքը: Բաժանք, անտեսութեան կոր-  
 ընկ աղաւնի մահը աղաւնագոյութեան  
 ծանումն եւ խաչիկի մահը կործանում  
 պատճառով: Միջոցն ու խաչիկը, կործանում  
 են, որովհետեւ ծառայում են մատնում իրանց:  
 թեան դէմ, պարապութեան են մատնում իրանց:  
 Պատահականութիւնն ընտրելով իրանց համար  
 գոյութեան աղբիւր, նրանք ընկնում են պատա-  
 հարութեան ծանրութեան տակ: Բախտաւոր  
 հակապատկերները, որ ամուռնչ են թարկում  
 չեն միւս գիւղացիները, որ ամուռնչ են թարկում  
 հողի իշխանութեան եւ նրա թեւադրանք-  
 ներ հողի իշխանութեան հանդիսանում: «Տափան  
 ների հլու կատարողը հանդիսանում է Տարգարը» իր գոմէշներին կնոջից առաւել է  
 սիրում: Մի անուշ խօսք չունի ասած կնոջը:  
 կայծակնահար է լինում, սակայն վերջին խօսքը  
 դարձեալ նուիրում գոմէշներին ու կիսատ մնա-  
 ցած հերկին: «Փիլիկ աղբարը» ունեւորների  
 տան ծառան է, յափշտակւած աշխատանքով եւ  
 սպասուորութեամբ: Սա ոչ միայն հողի գերին  
 է, այլ եւ իր նմանի, մարդու ճորտը: Անպէտք  
 դատելով՝ դուրս է վտարում ունեւորի բակից  
 ու ծառայութիւնից եւ իր մահը գտնում մարա-  
 դում: Փիլիկը վերջնականապէս ուրացել է ինքն  
 իրան, ուրացել ուրիշներին ծառայելու համար:  
 Սպանելով իր մէջ մարդկային ամեն մի եսա-

մոլութիւն՝ նա լուծւել է բնութեան հետ: Եւ զարմանալի է, որ կենդանիները, իրանց նախնական բնազդներով, աւելի լաւ էին ծանաչում ու գնահատում փրկիկին.

«Կենդանիները ծանօթ էին փրկիկ աղբոր բոլոր շարժումներուն: Կը ծանշնային անոր հազարը, անոր քնանայը:

Փրկիկ աղբար երբ ախոռէն ներս մտնէր, ջրին իր գլուխը անոր կը դարձնէր, ձիերը կը խրինչէին ծիծաղի պէս թեթեւ ու հնչուն. ոմանք իրենց վերջի երկու սրունքներու վայ կը փորձէին կանգնիլ ի նշան իրենց անասհման ուրախութեան:

Փրկիկ աղբարն էր գայեակը, երբ մատակ ձի մը, կով մը եւ կամ մատակ գոմէշ մը ծնէր: Ինք կ'ըլլար արցունքոտ աչքերով միակ յուզարկաւորը, երբ մեռած կենդանի մը, ախոռի սեմէն դուրս քաշէին կապով»:

Թշուառ են գիւղացիները, հարկաւ, նրանք՝ որ հողի իշխանութիւնից զատ իրանց շինքին կրում են եւ բռնացողներ իշխանութեան արհաւիրքը: Բայց սովորութեան թէ վաղեմութեան պատճառով, այնուամենայնիւ, գիւղը, Համաստեղի գիւղը, գերադասելի է քաղաքից: Այստեղ՝ գիւղի ձախորդութիւններից ճողու պրածը առաւել անմխիթար վիճակի ու գոյու դանը («Վարդան» խորագրով պատմուածքի հերոսը) կին չի ձարում իր համար. նրա մեծագոյն վիշտը դա է: Ամուրի մնալու վիճակին դատապարտւած՝ նա խորագէտ դժբախտ է եւ կամաց-կամաց ընչում է կենդանի մարդկանց շարքից: Կար ամուռն («Զոհը կար ամուռն էր» պատմուածքում) գործարանի մէջ պահ մի տարւում է հայրենի գիւղի յիշողութիւններով եւ մեքենային զոհ գնում: Համաստեղը գիւղն չի իրէալականացնում, բայց նախապատուութիւնը նրան է տալիս: Այստեղ հողը ամուր է մարդու ոտքի տակ, երեքուն վիճակը բղիտում է նրանից, որ մարդը քամահանք է սկսում տածել գէպի հողի իշխանութիւնը:

Կարգալով Համաստեղի պատմուածքները, նշմարելով նրա ժխտողական վերաբերմունքը գէպի քաղաքի կեանքը — ստանում ենք այն սպաւորութիւնը, որ մեր երկրասարգ հեղինակը իր մտածելակերպի աշխարհում վճիռ գաւառնանք գեռ չի նուաճել: Գիւղը անցեալն է. այն կարող է իմաստաւորել քաղաքի օգնութեամբ: Ռուս ժողովրդահոգ գրողները շատ

են մեծարել գիւղը եւ խարանել քաղաքը: Դա մնացել է եռանդի եւ սրտի թրթուրների ապարդիւն վատնումն: Ռուսների պէս հայերն էլ են ողբացել պանդխտութիւնը, գիւղը քայքայումը (Ս. Մելիք-Շահնազարեան, 1էօ, Ա. Աղեղեան), բայց յաղթանակել է քաղաքը այսինին կապիտալիզմը: Համաստեղի «Զոհը կար ամուռն էր» պատմուածքի պէս մի պատկեր ունի սպագրած Մելք. Եսայեանը «Մուրճում» (1900, խորագրով՝ «Երազ»): Այստեղ էլ բանւորը տարւում է գիւղի յիշողութիւններով, չարգում գործիքը եւ պատիժ ստանում գործարանի վարչութիւնից: Հասարակական զարգացումը ընթացաւ ոչ այն ուղիով, որ երազկոտ բանւորը գիւղը դառնայ իր կամեցածին չափ անվտանգ ու անկաշկանդ երազելու, այլ որ նոր պայմաններում ճանաչէ ինքն իրան, իր դասակարգի մարդկանց եւ ջանայ նրանց հետ ձեռք ձեռքի տուած կերպարանափոխելու ընկերային կեանքը: Այժմ նորվեգական ականաւոր վիպասան Անուտ Համսուըր գիւղակրթութեան մի պրոպագանդ է սկսել իր վէպերում («Հողի հիւթերը», «Վերջին զուլի»): Հաւանօրէն նորվեգիայի մանր սեփականատէրերի աշխարհում ընկերային կեանքը կնճիւններ է յարուցել, որ վիպասանը փրկութիւնը տեսնում է հողագործութեան մէջ եւ փառաբանում հողի իշխանութիւնը:

Ի հարկէ, քննադատի հասարակական այս կամ այն դաւանանքը դեռ չի նշանակում ստեղծագործութեան ծրագիր պարտադրել գեղարուեստագէտի համար: Քննադատութիւնը լուսաբանում եւ մեկնաբանում է, պարզելով, թէ որտեղից են բղիտում արուեստագէտի համարանքներն ու հակակրանքները, հասարակական օրպիտի երեւոյթներ են գոյն ու թափ հաղորդում արուեստագէտի գործերին: Համաստեղը թող աւելի շատ ունկնդրէ իր գեղասիրական բնազդին: Այդտեղ է թագնւած ձիւքի գաղտնիքը, այդտեղից են յարութիւն առնում անմեռ խօսքով մեզ մղում է ճանաչելու իրականութիւնը՝ նա խոշոր ծառայութիւն է մատուցում: Դրա համար հայ ընթերցողը նրան միայն շնորհակալութիւն ունի յայտնելու:

Երևան, 13 Մարտ 1925:

Գ. ԱՅՆՈՒՄ

